ռողական ձայն։ Ցանձնաժողովի անդամները որոշեցին են. կոմս Լորիս-Մելիքով, Սարաբով, Աքաղա, Պոսիէ և իշխան Լիվեն։

—

Վերջին տեղեկութիւններին համեմատ ամբողջ Ռուսաստանում հրատարակվում են 483 պարբերական հրատարակութիւններ, որոնցից ռուսաց լեզուով 376 հատ, լեհական լեզուով 54, գերմաներէն 31, լատիներէն 10 հատ, ֆրանսերէն 8, հայերէն 6, էստոներէն 6, հրէարէն 4, վրացերէն 3, ֆիններէն 2 և լատիներէն 1 հատ։

—

Ս. Պետերբուրգում հրատարակվող կիսապաշտօնական «Берегъ» լրագիրը, որի խմբագիրը պ. Ցիտովիչն է, յայտնում է որ եկող 1881 թվից սկսած այլ ևս չի հրատարակվիլ։

—

Սատանայք ՇՈՒՇՈՒՅ պ. Հ. Առաքելեանցից 16 բուրլ յօգուտ վանքների հեռանալ նուիրատուներից. պ. Մարգարեան 10 բուրլ, Տիգրան Նազարեան և օրիորդ Ս. Գևորգեան 6 բուրլ։

ԸՐՏԵՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ներկայ 1880 թուականի ընթացքում թէպէտ եւրոպական կեանքը չը վրդովվեցաւ արիւնահեղ պատերազմով, որին շատերը սպասում էին, բայց այնու ամենայնիւ եւրոպական դիպլոմատիան բաւական լարված դրութեան մէջ էր։

Ամենախոշոր հարցը, որ զբաղեցնում էր եւրոպական կառավարութիւններին, արևելեան հարցն էր։ Հարկաւոր էր իրագործել Բերլինի դաշնագիրը և դրա համար Գերմանիայի մայրաքաղաքի մէջ հաւաքվեցաւ մի կոնֆերենցիա պատուիրակների ներկայացուցիչներից, որոնք վճռեցին կայացրին վիճելի երեք հարցերի վերաբերեալ։ Այդ հարցերն էին չինովորնիկան, յունական և թէ Հայաստանի և թէ քրիստոնէական թիւրքաց այլ նահանգների մէջ վերանորոգութիւնների մտցնելու խնդիրը։ Ընթերցողներին յայտնի է, թէ ինչպէս կայացաւ եւրոպական առերես համաձայնութիւնը կոնֆերենցիայի վճիռները իրագործելու համար, ինչպէս կազմվեցաւ միացեալ նաւատորմը և ծովային ցոյց եղաւ, որի հետևանքն էր չերնոգորիական խնդրի լուծումը և Դուլցինիո քաղաքի չերնոգորյցիների ձեռքը անցնելը։

Ներկայ 1880 թուականը եկող տարվան ժառանգութիւն է թողնում յունական և հայկական անվճիռ մնացած հարցերը, որոնցից առաջինը եթէ ընդհանուր եւրոպական պատերազմի պատճառ չը դառնայ, գոնեա անհրաժեշտ կը դարձնէ յայնութիւրքական մի կոնֆերենս։

Ներկայ թուականի ընթացքում անդրկովկասեան պահպանողական մինիստրութիւնը փոխվեցաւ և լորդ Բիկոնսֆիլդին յաջողեց Գլադստոնն։ Անգլիական ազատամիտ մինիստրութիւնը բոլորովին այլ տեսակէտից նայեց արևելեան հարցի վրա, որի վճռելը Բերլինի դաշնագրի համեմատ նա անհրաժեշտ համարեց և այդ նպատակին հասնելու համար մեծ աշխատանքներ գործեցրեց։ Իբրևանական կալուածական հարցը ներկայ տարվայ ընթացքում ծագեցաւ և մինչև այժմ կառավարութիւնը արտաքոյ կարգի միջոցների չէ դիմում, որպէս զի կարողանայ եկող տարի երկրի մէջ կալուածական վերանորոգութիւններ մտցնել և փոքր ի շատէ ապահովել ֆերմերներին։ Այդ ծանր հարցն էլ մնում է եկող տարվան իրրև մի ժառանգութիւն։

Ֆրանսիական հանրապետութիւնը հետզհետէ զօրանում է, չը նայելով նոր թշնամիների աշխատանքներին։ Հոգևոր միաբանութիւնների դէմ ուղղված օրէնքները ազգային ժողովների հաստատութիւնը ստանալուց յետոյ իրագործվեցան կառավարութիւնից։ Ֆրանսիան իր զօրքերին նոր գրաշահներ բաժանեց և այդ հանդէսի ժամանակ երևաց, որ Ֆրանսիայի պատերազմական ոյժերը վերակազմված են վերջին պատերազմի ջարդից յետոյ։ Ֆրանսիայի Ֆինանսների դրութիւնը միւս բոլոր պետութիւններից աւելի լաւ է և դրա պատճառն այն է, որ Ֆրանսիացիք հաստատում են իրանց կառավարութեան խաղաղասիրական քաղաքականութեանը, որ և ապացուցվեցաւ վերջին ժամանակներում Ֆրանսիայի ունեցած արտաքին յարաբերութիւնների ժամանակ։ Բացի այդ Ֆրանսիական պատգամաւորների ժողովը, վերջացնելով իր ներկայ տարվայ նիստերը, ձայների հաւասարի մեծամասնութեամբ ընդունեց պարտադիր ուսման օրինագիծը, որի համեմատ ծնողները պարտաւորվում են իրանց երեխաներին ուսում տալ մինչ 13 տարեկան հասակը։ Այդ կրթութիւնը բուն ազգային ուղղութիւն կունենայ և ազատ կը լինի կղերականների ազդեցութիւնից։

Աւստրո-Ունգարիայի մէջ շարունակվում են կուսակցական կռիւները և ներկայ տարվայ ընթացքում այդ երկիրը բնակեցնող զանազան ազգութիւններից ամենից շատ շահվեցան լեհացիները։ Աւստրո-Ունգարիան մի դաշնակցութիւն կապեց Գերմանիայի հետ, որ մինչև այժմ հաստատ է մնում և ապագայում կարող է կուսակիցներ ունենալ։

Գերմանիան շարունակ պատրաստ է իր առաջնակարգ դիրքը եւրոպական պետութիւնների շարքում, որ նա ստացաւ Ֆրանսա-գերմանական պատերազմից յետոյ։ Կառավարվելով իշխան Բիսմարկից, գերմանական ազգային ժողովը անդադար օրէնքներ է հրատարակում սոցիալիստների դէմ։ Գիտութեան այդ մայրաքաղաքի մէջ ներկայ տարվայ վերջերում հալածանքներ սկսվեցան հրէաների դէմ և այդ հալածանքների նշանաբանը համալսարանական ամբիոնից տրվեցաւ։ Հրէաների դէմ հալածանքները մինչև այժմ շարունակվում են և կառավարութիւնն էլ համամիտ է հալածողներին, ինչպէս այդ երևում է գերմանական կառավարութեան պաշտօնական լրագիրների մէջ տպված յօդուածներից։

Իտալիան ներկայ տարին գլխաւորապէս զբաղված էր իր ներքին գործերը կարգի բերելով և մասնակցում էր քաղաքական գործերին եւրոպական համաձայնութիւնը պահպանելու համար։

Ռուսաստանի կեանքը 1880 թուի սկիզբներին չափազանց ծանր էր և ռուս հասարակութիւնը վրդովված դրութեան մէջ էր։ Չարագործները անդադար յանցաւոր փորձեր էին անում կառավարական ներկայ կազմակերպութեան դէմ, որոնք բաղդաւորապէս անաջողութեամբ էին անցնում։ Վերջին ժամանակներում կառավարութիւնը առաջն առաւ այդ բոլոր անկարգութիւնների և սկսեց շարունակել թագաւոր Կայսրի վրայից բռնած վերանորոգական ընթացքը։

Պէտք է նկատել վերջապէս, որ ներկայ տարվայ ընթացքում եւրոպական բոլոր կառավարութիւնները յայտնում էին, որ նրանց համար անհրաժեշտ է խաղաղութիւնը կոստվէք, խան, բայց այդ չէ արգելում ձեզ պանանջել որպէս պատանու, նոյնպէս և միւս գերիների համար արժանաւոր վարձատրութիւն։

Մելիքի Նպատակը այն էր, որ խանը պահանջի այնպիսի անգամ գումար, որ Թորոս իշխանին չը կարողանայ վճարել, զրանով զարձեալ խանը չը կարողանայ գերիները մի մասը ազատել։ Բայց ինչ ստանալուց կը լմնէր իր նպատակին։ Բայց ինչ ստանալուկան նպատակ էր այդ,—պէտք է պարզել։

Մելիքի Ֆրանգիլը վազուց գիտակցութիւն ունէր Գենուայի գաւառի մելիքութիւնը իր ձեռքը ձգել։ Այս նպատակով, նա երան աջակից ընդունելով տաթևացի Դաւիթ ուրացողին, երկուսը մասին կարողացան խանին զրգռել Գենուայի վաղեմի իշխան Մելիք Պարթանէսի դէմ։ Դաւիթը այնպես սարքեցին, որ Մելիք Պարթանէսը բոլորովին անպատրաստ, խանի հրոսակները յանկարծ մտան նրա երկիրը։ Շանումանների ստոր բոլորովին ընկնելով եղաւ, ինքը Մելիք Պարթանէսը ընկաւ կռիւի մէջ։ Այդ առանձին իշխանական ստոմից ազատվելուց մի պատանի միայն, Ստեփաննոսը, որը գերի ընկաւ խանի զօրքերի ձեռքը։ Նրա հետ գերի առնվեցան Գենուայի գիւղերի բոլոր նշանաւոր տանուտէրները։ Անտանելի խանը իր կողմից նշանակեց այդ գաւառում պարսիկ կառավարիչներ։ Գերիները այնքան ժամանակ պահվում էին խանի բանտերում, մինչև Գենուայը բոլորովին հպատակեր և ժողովուրդը ապստամբական փորձեր չանէր։ Բայց որովհետև ժողովրդի գլխաւորները ոչնչացված էին, և նրանց զանգվածները որպէս զբաղական պահվում էին տիրող բռնակալի ձեռքում, այս պատճառով անտէր, անառաջնորդ Գենուայը շուտով խոնարհվեցաւ պարսիկ խանի իշխանութեան ներքոյ։ Այնուհետև աւելորդ էր պահել գերիներին, երբ կարելի էր ստանալ նրանց փոխարէն բաւական մեծ գումար։ Բայց Մելիք Ֆրանգիլին այդ ձեռնտու չէր։ Նա ծանրանալու թէ Շանումանների ստոմի հետ նա ցանկանում էր ոչնչացնել այդ հոյակապ ընտանիքից մնացած մեկ ներկայացուցիչը, Ստեփաննոսին, որ ինքը մեծ Գենուայի տէրը։ Թէև այդ մասին նա դեռ ոչինչ խօսեցած չէր խանի հետ, բայց մեծ յոյս ունէր, որ կարող է հանել իր նպատակին, որովհետև խանը նրա օգնութեամբ, նրա առաջնորդութեամբ միայն կարողացաւ տիրել Գենուային և յաղթել Մելիք Պարթանէսի նման մարդուն, որը մեծ զօրութեան տէր էր։ Պարսից խանները սովորութիւն չունէին իրանք կառավարելու հայոց գաւառները։ Նրանք ջանանում էին հայ մելիքներին և տարեկան մի նշանակեալ հարկ էին ստանում։ Ո՞վ աւելի արժան էր այդ պաշտօնին, քան Մելիք Ֆրանգիլը, որ այնքան հաւատարիմ էր խանին, որ այնքան օգնել էր նրան Գենուայի տիրապետութեան մէջ։

Մելիք Ֆրանգիլը երկար ժամանակ աշխատում էր պատանի Ստեփաննոսին խեղդել տալ բանտի մէջ, բայց այդ փորձը, ինչպէս տեսանք, չը յաջողվեցաւ։ Նա այնքան երկիւղ չէր կրի այդ պատանուց, եթէ նա չունենար մի այնպիսի հզօր քեռի, որպիսին էր Թորոս իշխանը, Զանգեզուրի ամբողջ գաւառի տէրը։ Ստեփաննոսի մայրը այդ իշխանի հարազատ քոյրն էր։— Ցարակոյս չը կայ, մտածում էր Մելիք Ֆրանգիլը, որ Թորոս իշխանը, ազատելով իր քրոջ որդուն, կը պահէր իր մօտ, կը մեծացնէր, և վերջը կաշխատէր նրան կրկին իր հայրենական ժառանգութեան տէր դարձնել։

Ահաւասիկ սերը խանի մէջ մեծ էր ամեն բանից։ Մելիք Ֆրանգիլի բոլոր խորհուրդները, բոլոր փաստերը, թէ գերիներին իր մօտ պահելով կամ ոչնչացնելով, կարող էր նա ապահովացնել Գենուայի տիրապետութիւնը,—այդ վերջաններին խանը մեծ նշանակութիւն չը տուեց։ Նրան միայն զրաւեց փողի խնդիրը և այս պատճառով հարցրեց, թէ ինչքան կարելի է պահանջել Թորոս իշխանից։

—Մելիք Պարթանէսի ամբողջ գանձը, պատասխանեց մանուչը։

Խանը զարմացաւ, ասելով, թէ Մելիք Պարթանէսը ինչ որ ունէր, ինչ որ չունէր, բոլորը կողոպտվեցաւ կռիւի ժամանակ։ Մինչէ դեռ ես նրանից մի բան մնացած է։

—Ինչպէս չէ, պատասխանեց Մելիքը ժպտելով, որպէս մի մարդ, որ ծպտում է երեխայի միամտութեան վրա։—Մելիք Պարթանէսը դեռ կուտակված կուտի մեծ

թեան պահպանելը և մի և նոյն ժամանակը ուժեղացնում էին իրանց պատերազմական մինիստրութեան բիւդժեսը, որ իւրաքանչիւր պետութեան մէջ աւելի շատ դրամ է կլանում, քան թէ միւս մինիստրութիւնների բիւդժեսները առանձին առանձին։ Ամբողջ տարվայ ընթացքում, երբ մի երկրի կառավարութիւնը նոր դրամ էր պահանջում զինուորական ծախսերի համար, նա անհրաժեշտ էր համարում հաւատացնել, որ այդ ծախսերը հարկաւոր են խաղաղութիւնը պահպանելու համար։ Այժմ Եւրոպան մի մեծ զօրատուն է կազմում։

„DAILY-NEWS“ ԼՐԱԳՐԻ ՑՕԴՈՒԱԾԸ

„Հայաստանի վիճակը“ վերնագրով „Daily-News“ այսպէս է գրում։ Սիվասից եկած մէկ նամակ հաղորդում է որ, այդ քաղաքում Ալէքսանդր անունով մի հայ սպանեցին երկու օր նրա աղջկայ հարսանիքից առաջ։ Հայաստանում սովորութիւն է հիւրերին հարսանիքից մի քանի օր առաջ հրաւիրել, և այդ պատճառով էլ երբ սպանումը տեղի ունեցաւ՝ բուական մարդիկ կային հաւաքված տան մէջ։ Այդ տխուր լուրն առնելով նրանք բոլոր հասարակութեան ընկերացութեամբ դիմեցին Վալին և պահանջեցին միւսիւլման մարդասպանի պատիժը։ Շատ յուզված լինելով յարձակվեցաւ դրսի ժողովուրդը Վալիի ապարանքի վրա և փշրեց պատուհանները։ Վալին կանչեց իր զօրքը, որ հազիւ հազ կարողացաւ ցրել ամբոխին։ Այդ պատճառով յիսունի չափ անձինք են կալանաւորված, իբր թէ սուլթանի գերիշխանութեան դէմ ապստամբիլ են։

Վանի մօտ Նոդուզ գիւղի վրա քիւրդերը յարձակվում և հայերի անասունները քշում տանում են։ Երբոր նրանք դիմում են կուսակալին, ասում է թէ նա կարողութիւն չունի քիւրդերին բռնելու կամ նրանց պատժելու։ Գիւղի մէջ Նարոյ անունով մի իշխան՝ մի քաջ հայ պատասխանում է, „հիմա որ դուք միջոց չունէք մեզ քիւրդերից պաշտպանելու, մենք ինքներս պէտք է մեզ պաշտպանենք“։ Ցեռոյ նա զինում է Նոդուզի բնակիչներին և նրանց առաջնորդում քիւրդերի դէմ։ Դրանք հասնում են քիւրդերի վրա այն ժամանակ, երբ նրանք իրանց աւարը բաժանելիս են լինում։ Տեղի է ունենում մի լաւ կռիւ, որի մէջ քիւրդերից վեցը սպանվում և շատերը վիրաւորվում են։ Ցեռոյ քիւրդերը իրանց գողացած բոլոր անասունները ձգելով փախչում են։

Նոյն լրագիրը „Մի հայերէն լրագրի դադարումը“ վերնագրով այս է հաղորդում։ Մենք լուր առինք, որ Կ. Պոլսում ապրող հայերէն լրագիրը „Մասիս“ մէկ ամիս միջոցով դադարել է, որովհետև քիւրդերի դէմ մի յօդուած է հրատարակել։ „Մասիս“ մի պարսկերէն թերթից մէկ լուր քաղելով թէ քիւրդերը Մարաղայի մօտ (Պարսկաստանում) հազար հայ ընտանիք են կոտորել, լուսաբանում է այդ լուրը ասելով թէ քիւրդերը վայրագ և արիւնարբու են, և ասում է որ կառավարութիւնը պէտք է նրանց դէմ զօրեղ միջոցներ գործադրէ։

Կարծում են որ Բարձր. Դուռը ուզում է տաճիկների սիրտը շահել քիւրդերին էլ այնպէս հայերի դէմ զոյծածելով, ինչպէս ալբանցիներին չերնագօրցոց դէմ գործածեց։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳՐԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՈՆ, 25 դեկտեմբերի։ Պարլամենտը բացվեցաւ գահական ճառով, որ կարդաց լորդ Սելիսբուրին։ Լորդերի ժողովի մէջ քիչ անդամներ կային, իսկ համայնքների ժողովի մէջ շատ պատգամաւորներ։ Ճառի մէջ ասված է, որ եւրոպական համաձայնութիւնը խանգարված չէ։ Կառավարութիւնը բանակցում է պետութիւնների հետ յունական հարցը խաղաղութեամբ լուծելու մասին և յոյս ունի, որ նրանք կաջողվին։ Կառավարութիւնը յոյս ունի խաղաղական համաձայնութեամբ վերջացնել պատերազմը բասուտների հետ։ Դիտաւորութիւն չը կայ երկար ժամանակ զբաղել Անդամհարը։ Արգադրութիւնները են արված բրիտանական հեղինակութիւնը Տրանսվասլի մէջ շուտով վերականգնելու համար։ Իրլանդիայի վերաբերութեամբ կառավարութիւնը լրացուցիչ իրաւունքներ կը պահանջի կարգը վերականգնելու և բնակիչների կեանքը, սեփականութիւնը և անձնական ազատութիւնը պաշտպանելու համար։ Կառավարութիւնը խոստանում է բացի 1870 թ. կալուածական օրէնքի ընդարձակ գործադրելը, մի օրէնք առաջարկել՝ իրլանդական կոմսութիւնների մէջ անդլիականների նման տեղական ավտոնոմիա մտցնելու վերաբերութեամբ։ Ֆօրստեր յայտնեց համայնքների ժողովին, որ նա ժողովին բիլ կառաջարկի կեանքը և սեփականութիւնը աւելի լաւ ապահովելու համար իրլանդիայի մէջ, զէնք կրելու մասին և հասարակական հանգստութիւնը պահպանելու համար։ Պարնել յայտնեց, որ նա կընդդիմանայ այդ բիլերի առաջարկութեանը։ Կլադստոն յայտնեց, որ երկուշաբթվանից նա անդադար կը պահանջի յիշեալ բիլերի առաջարկութիւնը, մինչև որ ժողովը նրանց վերջնականապէս կը քննի։

ԱԹԻՆԱ, 26 դեկտեմբերի։ Անդլիական դեսպանը յայտնեց կոմսունդուրոսին, որ Անդլիան միացաւ պետութիւնների առաջարկութեան հետ յունական խնդիրը միջնորդ դատարանի օգնութեամբ լուծելու մասին և խորհուրդ է տալիս Յունաստանին ընդունել այդ առաջարկութիւնը։ Թագաւորի հետ խորհրդակցելուց յետոյ կոմսունդուրոս մինիստրների խորհուրդ կազմեց, որ երեք ժամ տևեց։

ԲԵՐԼԻՆ, 27 դեկտեմբերի։ Այսօր վերադարձաւ իշխան Բիսմարկ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 դեկտեմբերի։ „Голосъ“ լրագրին հեռագրում են Կ. Պոլսից. Ֆրանսիայի և Աւստրիայի պահանջների պատճառով Բ. Դուռը ազատեց միրիդիտների իշխան Պրենկոին։ „Молва“ լրագիրը լսել է. դիտութիւնների ակադեմիայի Նախագահ կոմս Լիակէ պաշտօնապէս գժգոհութիւն յայտնեց ակադեմիայի երկու ռուս անդամներին, որովհետև նրանք բողոքեցին շվեդացի Բակլունդին գօրեմոր ընտրելու դէմ։ Այսօր գործարանատէր Նոբել մեծ բանկետ է տալիս ի պատիւ Նոբելենշելդի։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պ. Ն. Տէր-Ղևոնդեանը խնդրում է մեզ տպագրել հետևեալը.

„Մայրենի լեզուի“ վերջին—ութերորդ տպագրութեան 33-երորդ երեսում մի խոշոր զանցառութիւն է մտել՝ Լուսացաւ վերնագրով ժողովրդական բանաստեղծութեան միայն առաջին, երկրորդ և չորրորդ տողերն են շարուել, փոխանակ ամբողջի։ Խնդրում եմ այդ գիրքը գործածող ուսուցիչներին ի նկատի ունենալ այս և աշակերտներին սովորեցնել ամբողջ բանաստեղծութիւնը, որը հայտնի թէ նոցանից մէկին անծանօթ լինի, և ոչ թէ միայն յիշեալ երեք տողը“։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ծախվումեն ԲԼՎՕԼՎԵՐՆԵՐ, որոնցով մի անգամից կարելի է 20 ԱՒԱԶԱԿ ՍՊԱՆԵԼ, իւրաքանչիւր ասազակ 1 ր. 50 կ.։ Մի և նոյն տեղը ամեն տեսակ անգլիական գէնք միւս տեղերից 30% էժան։ Արծրունու գալերէյ։ 1—12

Ամբողջ հագուստ կամ պալտո 15 ր., բէվոլվերներ 4 ր. և աւելի թանգ, օձֆեկտներ հազի դէմ 60 կ. ֆունտը, խինայի գինի և փշլ ջրմի դէմ 1 ր. 50 կ., խերես, պօրտվէյն 1 ր. 20 կ., օձեակ շիշը 2 ր.։ Բացի այդ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ստացված է թէյ մեծ քանակութեամբ։ 4—12

ԹԻՖԼԻՍԻ ԿԱՇՈՒ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Բաց անելով իր բոլոր արդիւնաբերութիւնների պահեստը միջի փողոցի վրա Կաժեվնայա կայզում Քարթվելովի տանը, պատիւ ունի առաջարկել պ. պ. առևտրականներին և գործածողներին ամեն տեսակ պաղաշի, ձիու, իւֆտի և օպոյկի ապարանքներ, նոյնպէս և վիտեաժկաներ, գալոշկաներ, սիրոմատների կաշիներ, թամբի և մեքենաների բէմեներ։ Ցանվումեն գործարանի գներով։ 9—20

Մամուլի տակից դուրս են եկել և վաճառվում են կենտրոնական գրավաճառոցում։

Ն. Տէր Ղևոնդեան Մայրենի լեզուի ա. տ. 8-դ տպագրութիւնը գ. 35 կ.

Ս. Ա. Ռ. Տէր-Սահակեանցի Սկզբունք Քրիստոնէական հաւատոյ դասագրքի երկրորդ տպագրութիւնը գ. 50 կոպ.։

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնէ Ս. Մանդինեանցի Թուրքական խնդիրների ա. մ.

Այսու պատիւ ունեմ ՑԱՅՏՆԵԼ ՏՓԻԽԻՍԻ հասարակութեան, որ մօտ օրերս մտադիր եմ ԿԱՊԱԼՈՎ. ՏԱԼՈՒ մեծ Ռազազխանայի մէջ գտնուած երկու աշէք կրպակները № 33 իրանց կուզովվ և վերնասենեակով իւր շրջակայ շկաֆներով, որոնք պատկանում են Մողնոյ սուրբ Գէորգ եկեղեցւոյն։ Ցանկացողները կարող են դիմել ինձ մօտ ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳԵՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԵՐԸՆԴ, ամեն օր 9 ժամից առաւօտեան մինչև 10 ժամն և իմանալ պայմանները։

Նրեսփոխան Մողնոյ սուրբ Գէորգ եկեղեցւոյ Ն. Խոսրովեանց

4—7

ԱՄԵՆԱՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՑ 1 ր. 20 կ. մինչ 2 ր. ֆունտը ամենալաւը, ստացված է անգլիական խանութի մէջ։ Նոյն տեղը ստացված են մեծ քանակութեամբ գեղին մահճակալներ և ուրիշ ապրանքներ։ 10—10

ԸՆԹԵՐԹ

ՄԻ ԱՄՍԵԱՑ ՀԱՆԴԷՍ

(1—2 ՏՊԱԳՐԱԿԱՆ ԹԵՐԹԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ)

Կը հրատարակվի 1881 թուից Երևանում աշխատակցութեամբ պ. պ. բժիշկների Արտէմ Խմբիչ Յովհաննիսեան, Աւետիք Բաբայեան, Գրիգոր Տէր-Գրիգորեան, Մարտիրոս Քալանթարեան, Արմենակ Շահազիզեան, Քոչարեան, Բազրատ Նաւասարդեան, և հանրակալ ծրագրով՝

I Պետական կարգադրութիւնները ժողովրդի առողջութեան վերաբերութեամբ։

II Առողջապահական յօդուածներ աշխարհիկ ոճով։ Ժողովրդի առողջապահական պայմանները. բժշկական արհեստը ժողովրդի մէջ. բժշկականութիւնը ժողովրդականացրած.

III Բժշկական մատենախօսութիւն.

IV Խառն լուրեր. Յայտարարութիւններ.

Տարեկան գինն է 3 մանէթ կանխիկ վճարելի

Խմբագիր հրատարակիչ
Երևանայ քաղաքային բժիշկ
ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆՑ

Օնդան տներին երեխացոց նուիրելու համար կենտրոնական գրավաճառանոցում մի միջի այլոց վաճառվումեն հետևեալ գրքերը—

Նարեկացի Մ. Մանանարեանցի գ.	1 ր. 30
փառաւոր.	2 „ 30
Նարեկացի մանկական Ղեկեր. Բարատեանցի գ.	— „ 40
Մուղայք-այաստանի երգարան.	— „ 50
Թովմաս Եղբօր տնակը—պատկ.	— „ 5
կազմ.	— „ 60
Կարմիր լապտեր պատկ.	— „ 30
կազմ.	— „ 50
Թաւամազմեղուս պատկ. ու կազմած	— „ 40
Մանկական երգեր Գասամ-Քաթիբայի կազմ.	— „ 25
Ուօրբեն զօն կուզոէ լիակատ. թարգ. պատկ.	1 „ 75
Դոն-Քիշոտ լամանշեցի.	— „ 70
Գէորգ Ուօլեսոն.	— „ 60
Ընտիր այկազունք պատկերազարդ կենսագրութիւններ.	2 „ 75
Թորոս Աղբար-այաստանի ճամբորդ	1 „ 25
Ներսէր Կազանդի նշ. Պերպերեանցի	— „ 65

Նոյն տեղը վաճառվում են Ու. և գաղղիերէն լեզուներով մանկական գրքեր, խաղալիքներ, հասակաւորների համար վիպասանութիւններ և այլ գրքեր։

Дозволено цензурою, Тифлисъ, 29 декабря 1880 года. Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀԱՅԿ-ԱՌՄ СССР